ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

քաղաքի բարեկարգման և հարմարավետ քաղաքային միջավայրի ստեղծման համատեղ նախագծերի վերաբերյալ

Երևանի քաղաքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ընկերություններին, ֆինանսական հաստատություններին և կազմակերպություններին՝ քաղաքապետարանի հետ համատեղ մասնակցելու քաղաքի բարեկարգման, հարմարավետ քաղաքային միջավայրի ստեղծման և սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտների զարգացմանն ուղղված նպատակային նախագծերի իրականացմանը:

Երևանի քաղաքապետարանն առաջարկում է դիտարկել ընկերությունների և գործարար-հաստատությունների **գովազդային և PR-բյուջեի** հնարավորությունը ստորև թվարկված մեկ կամ մի քանի ուղղություններով.

- համաքաղաքային նշանակության շենքերի վերականգնում և վերակառուցում (շենքերի ճակատների և տանիքների վերանորոգում), ներառյալ շենքերի գեղարվեստական-դեկորատիվ լուսավորումն ու ձևավորումը,
- քաղաքային այգիների, պուրակների և այլ կանաչ գոտիների բարեկարգում և վերականգնում (կանաչապատում, շատրվանների վերանորոգում, նստարանների տեղադրում, լուսավորություն և այլն),
- քաղաքային հուշարձանների և հուշակոթողների վերականգնում և պահպանում, ներառյալ գեղարվեստական-դեկորատիվ լուսավորումն ու ձևավորումը,
- համայնքային սեփականություն հանդիսացող նախադպրոցական և դպրոցական կրթական հաստատությունների շենքային պայմանների (մանկապարտեզների, գիմնազիաների, դպրոցների և այլն) վերանորոգում և արդիականացում,
- համայնքային սեփականություն հանդիսացող մշակութային օբյեկտների շենքային պայմանների (կինոթատրոնների, մշակույթի տների, թատրոնների և այլն) վերանորոգում և արդիականացում:

Քաղաքապետարանը պատրաստ է շահագրգիռ ընկերություններին և կազմակերպություններին տրամադրել նախնական էսքիզային նախագծերը:

Որպես համապատասխան ֆինանսական միջոցների փոխհատուցում՝ քաղաքապետարանն իր պատրաստակամությունն է հայտնում շահագրգիռ ընկերություններին և կազմակերպություններին տրամադրելու քաղաքում իրենց արտաքին գովազդը տեղադրելու համարժեք պայմաններ: Նշված համատեղ նախագծերի իրականացումը թույլ կտա կարճ ժամկետներում և փոխշահավետ պայմանների հիման վրա բարեկարգելու մեր քաղաքը և ստեղծելու հարմարավետ քաղաքային միջավայր մեր համաքաղաքացիների և մայրաքաղաքի հյուրերի համար:

Շահագրգիռ կազմակերպությունները և ընկերությունները հրավիրվում են Երևանի քաղաքապետարանի Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն (a.gk@yerevan.am)՝ քննարկելու վերոնշյալ նախաձեռնությունները: